

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 23/15

ք.Երևան

25 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ալբերտ Սարգսյանը հայտնում է, որ 02.02.2018թ. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր: Այնուհետև 07.02.2018թ. դիմել է անձնագրային բաժին նույնականացման քարտ ստանալու համար, որը ստացել է մարտի սկզբին՝ PIN կոդի հետ միասին:

Վանաձորի ՏՀՏ-ից փետրվարի 14-ին ստացել է ծանուցում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, որտեղ նշված չէ, թե ինչ եղանակով է պետք շարժվել: Քանի որ նույնականացման քարտը դեռ չէին տրամադրել պետական գրանցման 15-րդ օրը, 17.02.2018թ. Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի կողմից փոստային ծառայության միջոցով ուղարկվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ա/Ձ Ալբերտ Սարգսյանը 20.03.2018թ. Վանաձորի ՏՀՏ-ից ստացել է պատասխան գրություն, որով հետ է վերադարձվել փոստային ծառայության միջոցով ուղարկված շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, քանի որ այն պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ալբերտ Սարգսյանը խնդրում է թույլ տալ համարվել շրջանառության հարկ վճարող:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ալբերտ Սարգսյանը ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 02.02.2018թ. հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր: Այնուհետև 07.02.2018թ. դիմել է անձնագրային բաժին նույնականացման քարտ ստանալու համար, որը ստացել է մարտի սկզբին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 16-րդ բաժնի կողմից Ա/Ձ Ալբերտ Սարգսյանին ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Ա/Ձ Ալբերտ Սարգսյանը պետական գրանցման 15-րդ օրը՝ 17.02.2018թ., փոստային ծառայության միջոցով ուղարկվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Սակայն վերջինս ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 16-րդ բաժնի 16.03.2018թ. գրությամբ հետ է վերադարձվել՝ պատճառաբանությամբ, որ այն պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպես (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ալբերտ Սարգսյանը ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվել է 02.02.2018թ.: Հետևապես, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու վերջնաժամկետը եղել է մինչև 22.02.2018թ. ներառյալ:

Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի կողմից սահմանված ժամկետում՝ 17.02.2018թ., սակայն թղթային եղանակով, ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որը հարկային մարմնում մուտքագրվել է 19.02.2018թ.: Սակայն նշված հայտարարությունը հարկային մարմնի 16.03.2018թ. գրությամբ հետ է վերադարձվել:

Հանձնաժողովը գտնում է, որ հարկային մարմինը Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի կողմից ուղարկված հայտարարությանն անմիջապես արձագանքելու և այն էլեկտրոնային եղանակով ներկայացվելու անհրաժեշտության մասին տեղեկացվելու դեպքում, հարկ վճարողը, ըստ էության, հնարավորություն կունենար սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Ալբերտ Սարգսյանին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Ալբերտ Սարգսյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ